

# Հարկային մարմնի ՏՏ ոլորտի զարգացման ռազմավարություն

---

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	2
ՄԱՍ I. ՏՏ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.....	4
<i>ՆՊԱՏԱԿ 1. ՀՀ-ՈՒՄ ՄՇԱԿՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ.....</i>	4
<i>ՆՊԱՏԱԿ 2. ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶՄՅԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ, ՀԱՄԱԼՐՈՒՄ ԵՎ ԱՄԲՈՂԶԱԿԱՆԱՑՈՒՄ.....</i>	7
<i>ՆՊԱՏԱԿ 3. ՌԻՍԿԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՈՒ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ ՈՒ ԿԻՐԱՌՈՒՄ.....</i>	14
<i>ՆՊԱՏԱԿ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ.....</i>	18
<i>ՆՊԱՏԱԿ 5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ.....</i>	21
ՄԱՍ II. ՏՏ ՈԼՈՐՏԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ .....	26
ԱՍՓՈՓՈՒՄ .....	33

Սույն ռազմավարությունը մշակվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 7-ին թիվ 941-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագրի 7-րդ նպատակի (Հարկային վարչարարության տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարման ապահովում), 95-րդ միջոցառման պահանջները:

Ռազմավարության մշակման նպատակն է սահմանել հաջորդող տարիների (2009-2011թթ.) ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնում ժամանակակից ՏՏ համակարգերի զարգացման հիմնական ուղղությունները և դրանց կիրառման ընդլայնումը, ապահովել հարկային մարմնում կիրառվող ՏՏ համակարգերի կապը այլ գերատեսչական մարմինների ՏՏ համակարգերի հետ:

Չնայած որ այս ռազմավարությունը նախատեսում է եռամյա շրջան, այն չի հանդիսանում մեկուսացված գործընթաց, որն ավարտվելու է երեք տարի հետո: Այն մշակված է այնպես, որպեսզի իրագործվի և վերազնահատվի յուրաքանչյուր տարի:

Հարկ է նշել, որ սույն ռազմավարությունը վերաբերում է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը և չի ներառում մաքսային մարմնի տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերը:

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հարկային մարմնում իրականացվող բարեփոխումների կարևորագույն ուղղություններից է հարկային վարչարարության տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարման համակարգի ներդրումը:

Ներկայումս հարկային մարմնի գործունեության գրեթե բոլոր բնագավառները կարիք ունեն ՏՏ ոլորտի աջակցության: Սակայն, չունենալով մշակված համապարփակ մոտեցում հարկային մարմնի ՏՏ ոլորտի զարգացման ուղղությունների նկատմամբ, որը համահունչ կլիներ հարկային մարմնում իրականացվող բարեփոխումներին, ՏՏ համակարգերի աջակցությունը հարկային մարմինների գործունեությանը կրում է ոչ լիարժեք բնույթ: ՏՏ ոլորտում իրականացվող գործողությունները հիմնականում ուղղված են գոյություն ունեցող համակարգերի սպասարկմանը: Դրա մասին է վկայում նաև Եվրահանձնաժողովի կողմից հավանության արժանացած ցուցանիշների համակարգի (Fiscal blueprints) հիման վրա 2008թ. հունվարին կատարված դիտարկումը: Ըստ դրա՝ հարկային մարմնի վարչական կարողությունների գնահատման արդյունքների՝ հարկային մարմնում ՏՏ կարողությունների

կիրառման արդյունավետությունը (ՀԳԱ 13. «Տեղեկատվական տեխնոլոգիաներ») գնահատվել է որպես ցածր: Առկա են շեղումներ Եվրամիության ընդունված ցուցանիշի համեմատ:

Պետք է նշել նաև, որ Հայաստանը աշխարհում զբաղեցնում է 143-րդ տեղը հարկերի վճարման դյուրինությամբ, ինչը ներկայումս ամենավատն է “Գործարարությամբ զբաղվելը” ծրագրի (Doing Business) ցուցանիշներից:

Որպես ՏՏ ոլորտի զարգացմանն ուղղված քայլերից է եղել ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից իրականացվող «Հայաստանի հարկային կատարելագործման ծրագրի» շրջանակներում մշակված ՏՏ ռազմավարությունը (2006թ.), որը հիմնականում ուղղված էր հաջորդող երեք տարիների ընթացքում հարկային մարմնի ՏՏ կարողությունների հզորացմանը, և իրականացվեց մասամբ:

Վերը նշված խնդիրների լուծման, ինչպես նաև հարկային մարմնում ՏՏ կարողությունների կիրառման ընդլայնման համար անհրաժեշտ է ունենալ միասնական մոտեցում՝ հստակ սահմանված նպատակներով և դրանցից բխող միջոցառումների ծրագրով:

***Հարկային մարմնի ՏՏ ոլորտի զարգացման գերակա նպատակն է՝***

***ՀՀ-ում ներդրվող էլեկտրոնային կառավարման համակարգի շրջանակներում ստեղծել հարկային մարմնի ժամանակակից, միջազգային չափանիշների համապատասխանող ավտոմատացված հարկային տեղեկատվական վերլուծական համակարգ:***

Հարկային մարմնի ՏՏ ոլորտի ռազմավարությունը համահունչ է լինելու Հայաստանում ՏՏ ոլորտի զարգացումներին և իրականացվող ծրագրերին, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 28.08.2008թ. նիստի արձանագրությունից թիվ 35 քաղվածքով հավանության արժանացած ՏՏ ոլորտի զարգացման հայեցակարգին: Արդյունքում հարկային մարմնում ձևավորվելու է արդիականացված տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգ, որը հնարավորություն կտա առավելագույնի հասցնել ՏՏ համակարգերի կիրառումը, ավտոմատացնել հարկային մարմնի խոշոր գործառույթները, ունենալ հարկ վճարողների վերաբերյալ ամբողջականացված տվյալների ժամանակակից բազա, անցում կատարել թղթայինից դեպի համակարգչայնացված գործողությունների իրականացմանը, նվազագույնի հասցվի մարդկային գործոնի «ռիսկային» ազդեցությունը, ուժեղացնել հարկային մարմնի վերլուծական և հսկողական կարողությունները և, ի վերջո, բարձրացնել հարկային մարմնի աշխատանքների արդյունավետությունը:

Սույն ռազմավարության 5 նպատակները պայմանավորված են ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնում առկա խնդիրներով և համակարգի որակական բարելավման թիրախներով: Դրանցից երկրորդը և հինգերորդը անմիջապես բխում են ներկայումս կուտակված խնդիրներից, որոնց

լուծումը հնարավորություն կընձեռի հասնել երրորդ և չորրորդ նպատակներին, ինչը կդարձնի ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական համակարգը ժամանակակից և արդյունավետ: Նշված նպատակներին հասնելը իր հերթին, հնարավորություն կտա ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական համակարգին սահուն ինտեգրվել հանրապետությունում մշակվող էլեկտրոնային կառավարման համակարգ (Նպատակ 1):

## **ՄԱՍ I . ՏՏ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

### ***ՆՊԱՏԱԿ 1. ՀՀ ՈՒՄ ՄՇԱԿՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ***

Ներկայումս առկա են պետության կողմից սուբյեկտների /կազմակերպությունների և քաղաքացիների/ հաշվառման և նույնականացման մի քանի ծածկագրեր: 2009թ.-ից սկսած ՀՀ կառավարության կողմից նախատեսվում է սկսել էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման աշխատանքները: Այդ համակարգից օգտվելու նպատակով անհրաժեշտ է նախօրոք ապահովել ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազաների համատեղելիությունը ներդրվող ծածկագրերի հետ:

Այս նպատակի ներքո իրականացվելու են հետևյալ ենթանպատակները.

- 1.1 ՀՀ պետական կառավարման մարմինների հետ տեղեկատվության փոխանակման գործընթացների ստանդարտացման նպատակով հարկային մարմնի տեղեկատվական բազաների կառուցում միասնական ծածկագրերի հիման վրա:
- 1.2 Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագրի համատեքստում անձնավորված հաշվառման համակարգի ներդրում

#### **Ենթադրություններ**

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական-վերլուծական համակարգը նախագծվել է հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության կողմից նախատեսվում է անցում կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, ֆիզիկական անձանց պետական գրանցման և հաշվառման մեկ պատուհանի՝ և մեկ ծածկագրի սկզբունքին

2. Առկա է քաղաքական կամք և իրականացվում է համակարգված քաղաքականություն՝ զուգահեռաբար համաձայնեցված և համադրելի ծրագրեր իրականացնելու առումով

3. Առկա են ծրագրի իրականացման ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներ

#### **Ռիսկեր**

ՀՀ Կառավարության կողմից փոխվել է հարկային ծառայության ռազմավարական ծրագիրը

**Ենթանպատակ 1.1.** ՀՀ պետական կառավարման մարմինների հետ տեղեկատվության փոխանակման գործընթացների ստանդարտացման նպատակով հարկային մարմնի տեղեկատվական բազաների կառուցում միասնական ծածկագրերի հիման վրա

Նախատեսվում է հարկային մարմնի տեղեկատվական բազան կառուցել հարկ վճարողների հաշվառման համարների միասնական համակարգի հիման վրա, դրա ներքո հաշվառման վերցնելով նաև անձի նույնականացման այնպիսի տեղեկություններ ինչպիսիք են մասնավորապես տնտեսավարող սուբյեկտների պետական գրանցման համարները, տրամադրված լիցենզիաների և թույլտվությունների համարները, ֆիզիկական անձանց սոցիալական քարտի համարները, անձնագրային տվյալները և այլն:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Ապահովվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ և պետական կառավարման այլ մարմինների տեղեկատվական բազաների ավտոմատ կապը միասնական ծածկագրերի և համապատասխան թույլտվությունների հիման վրա	2010 վերջում պետական կառավարման մարմինների տեղեկատվական բազաների 70% փոխկապակցված են միասնական ծածկագրերով

**Ենթանպատակ 1.2.** Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագրի համատեքստում անձնավորված հաշվառման համակարգի ներդրում

Անհատական հաշվառման տեղեկատվական համակարգի ստեղծումը հնարավորություն կտա նվազեցնել շահագործման ծախսերը՝ գերատեսչության ներսում եւ գերատեսչությունների միջեւ առկա գործընթացների կանոնակարգման, ստանդարտավորման, աշխատաժամանակի արդյունավետ օգտագործման միջոցով, ինչը հնարավորություն կտա ստեղծել նորմալ մոնիտորինգի հնարավորություններ, որն էլ իր հերթին կստեղծի ճիշտ եւ ժամանակին որոշումներ կայացնելու մեխանիզմ:

Տեղեկատվական համակարգը նախատեսում է անհատական տվյալների մշակման ընթացքում ապահովել հարկատուի միարժեք նույնականացումը, օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության փոխանակման գործընթացների կանոնակարգումը: Նույնացման սխալների բացառման մեխանիզմի ստեղծման պարտադիր պայմաններից է առկա այլ շտեմարանների տվյալների հետ խաչաձեւ ստուգումը՝ համադրումը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Ապահովվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազաների համատեղելիությունը ներդրվող համակարգի հետ	Հարկային մարմիններում հաշվառման են վերցվել հարկ վճարող ֆիզիկական անձանց 90%

## **ՆՊԱՏԱԿ 2. ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ, ՀԱՄԱԼՐՈՒՄ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆԱՅՈՒՄ**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության մասով տեղեկատվական համակարգը նախագծվել և ստեղծվել է 2002-2004թթ. ընթացքում և ներկայումս այն հնացած է ինչպես տեխնիկական, այնպես էլ բարոյական տեսակետներից: Այդ իսկ պատճառով խիստ կարևոր են դառնում սույն նպատակի և դրանից բխող ենթանպատակների գործողությունները և ակընկալվող արդյունքները:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական համակարգը.

- օպերացիոն համակարգ՝ Windows, նախատեսվում է կիրառել նաև Unix:
- տեղեկատվական բազայի կառավարման համակարգը՝ Oracle
- Ծրագրային լեզուներ՝ PL/SQL, SQL, Oracle Developer, նոր ծրագրային ապահովումը նախատեսվում է ստեղծել JAVA ծրագրային լեզվով:

Այս նպատակի ներքո նախատեսվում է հարկային մարմնում տեղադրել նոր սերվերներ, որոնք կփոխարինեն առկա բարձր ռիսկային սերվերները, կատարելագործել հարկային մարմնի պահուստային ապահովման և արտակարգ իրավիճակներում համակարգի վերականգնման կարողությունները, ինչպես նաև ներդնել նոր՝ վեբ-տեխնոլոգիաների հիման վրա ստանդարտացված ծրագրեր: Հարկային մարմնի առկա և ապագա ծրագրերը և հաշվետվությունները վեբ-տեխնոլոգիաների հիման վրա ստանդարտացնելը կլուծի մասնավորապես հետևյալ ռազմավարական խնդիրները

- կվերանա ծրագրերի կախվածությունը կոնկրետ սարքերից, տվյալների շտեմարանից և գործառնական համակարգերից
- կնվազի հարկային մարմնի ծրագրերի ընթացիկ պահպանության ծախսը
- կստեղծվի համակարգ և ենթակառուցվածք ապագա վեբ ծրագրերի համար:

Այս նպատակի ներքո իրականացվելու են հետևյալ ենթանպատակները.

2.1 Հարկային տեսչություններում և ՀՀ ԿԱ ՊԵԿ ստորաբաժանումներում ձևավորվող և վերադաս մարմնում հավաքագրվող բաշխված տեղեկատվական բազայից անցում վերադաս մարմնում ձևավորվող կենտրոնացված տեղեկատվական բազայի:

2.2 Էլեկտրոնային հարկային վարչարարության «Հարկատու 3» համակարգի ստեղծում:

2.3 Հարկ վճարողի միասնական տեղեկատվական դարանի ստեղծման և վերլուծության նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային տեղեկատվական բազայի համալրում անհրաժեշտ տեղեկություններով

2.4 Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի էլեկտրոնային տարբերակի արդիականացում, օրենսդրությանը համապատասխանեցում, թղթային տարբերակի հետ շեղումների բացառում

2.5 SS ոլորտի հարկային ծառայողների մասնագիտական վերապատրաստում, աշխատավարձերի բարձրացում, արդյունավետ խրախուսման համակարգի ձևավորում

### **Ենթադրություններ.**

1. Կազմակերպված է SS ոլորտի և ենթակառուցվածքների զարգացման բյուջետային պլանավորման հստակ մեխանիզմ և ֆինանսավորում, որը կազմակերպական մակարդակով վերահսկվում է

2. SS ոլորտի հարկային ծառայողների աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցները մրցակցում են համապատասխան մասնագիտությամբ մասնավոր հատվածում վճարվող վարձատրությանն ուղղվող միջոցների հետ և խթանում են հարկային ծառայությունում աշխատելը:

### **Ռիսկեր.**

1. Պետական բյուջեում առկա չեն համապատասխան միջոցներ կամ արձանագրվել է սղաճի էական աճ:

2. Հնարավոր չէ ապահովել հարկային ծառայողների մասնագիտական վերապատրաստում



**Ենթանպատակ 2.1.** ՀՀ ԿԱ ՊԵԿ ստորաբաժանումներում ու հարկային տեսչություններում ձևավորվող և վերադաս մարմնում հավաքագրվող բաշխված տեղեկատվական բազայից անցում վերադաս մարմնում ձևավորվող կենտրոնացված տեղեկատվական բազայի

Ներկայումս ՀՀ ԿԱ ՊԵԿ կենտրոնական տեղեկատվական բազան ձևավորվում է ՀՏ-ներում և ամիսը երկու անգամ հավաքագրվում է վերադաս մարմնում: Նախատեսվում է գույքագրել ՀՀ ԿԱ ՊԵԿ ստորաբաժանումներում վարվող տեղեկատվական բազաները, վերացնել կրնությունները, կատարել տեղեկատվական բազայի կառուցվածքի աուդիտ և ՀՏ-ներում մուտքագրվող տեղեկատվությունը կապի միջոցներով անմիջապես /on-line/ փոխանցել կենտրոնական սերվեր և կցել կենտրոնական բազային:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Ձևավորված է «ռեալ ժամանակում» աշխատող ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազան:	<ul style="list-style-type: none"> <li>- տվյալների ամենօրյա թարմացում</li> <li>- տվյալների ռեալ ժամանակում արտացոլում</li> </ul>

**Ենթանպատակ 2.2.** Էլեկտրոնային հարկային վարչարարության «Հարկատու 3» համակարգի ստեղծում

Առկա «Հարկատու-2» տեղեկատվական համակարգը նախագծվել և ստեղծվել է 2002-2004թթ. և ներկայումս չի բավարարում ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցների պահանջներին, և որոշ դեպքերում, գործող օրենսդրությանը: Նոր «Հարկատու-3» համակարգում նախատեսվում է իրականացնել տեղեկությունների ռեալ ժամանակում հավաքագրում, ոլորտային դասակարգում, հաշվարկ չներկայացնողներին և հարկեր չվճարողին ծանուցումների ուղարկում:

Համակարգը բաժանված է լինելու երկու առանձին մոդուլների՝ արտաքին և ներքին: Ներքին մոդուլը պետք է օգտագործվի հարկային մարմնի ներսում և օգտագործողներն ու սովյալները պետք է պաշտպանված լինեն արտաքին մուտքից: Արտաքին մոդուլը պարունակելու է տեղեկություններ հարկ վճարողների մասին և կնպաստի նրանց հետ հաղորդակցությանը: Արտաքին համակարգը ներառելու է էլեկտրոնային եղանակով սովյալների ներկայացման մոդուլ և ունենալու է արտաքին օգտագործողների կառավարման սեփական համակարգը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Նախագծվել և ներդրվել է ճկուն և ժամանակակից հարկային տեղեկատվական համակարգ: Առավելագույնի է հասցվել հարկ վճարողների և հարկային ծառայության աշխատակիցների կողմից ՏՏ համակարգերի կիրառումը	<ul style="list-style-type: none"> <li>- աշխատակիցների 70% օգտվում է նոր համակարգից</li> <li>- 2009թ. վերջում հարկ վճարողների 80% ծանուցվում են ավտոմատ համակարգի միջոցով սովյալների աղբյուր՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցների հարցումներ</li> </ul>

**Ենթանպատակ 2.3.** Հարկ վճարողի վերաբերյալ միասնական տեղեկատվական դարանի ստեղծման և վերլուծության նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային տեղեկատվական բազային համալրում անհրաժեշտ տեղեկություններով

Ներկայումս ՀՀ ԿԱ ՊԵԿ կենտրոնական տեղեկատվական բազայում լրիվ չեն երրորդ անձանց ստացված տեղեկությունները: Չկա նաև առանձին հարկ վճարողին վերաբերաբերող տեղեկությունների միասնական շտեմարան - դարան, որը հնարավորություն կտար առավել արդունավետ օգտագործել հավաքագրված տեղեկատվությունը: Նախատեսվում է գույքագրել օրենսդրությամբ սահմանված կարգով երրորդ անձանց կողմից հարկային մարմին ներկայացվող տեղեկությունները, անձանց նույնականացման նպատակով հնարավորինս ստանդարտացնել ներկայացվող տեղեկությունները և ամփոփել մեկ միասնական տեղեկատվական բազայում՝ բացառելով դրանց կրկնությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ այլ ստորաբաժանումներում:

Հարկ վճարողների վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազան, ներառելով նաև Ֆիզիկական անձանց կողմից գույքի և եկամուտների հայտարարագրման հետ կապված տեղեկությունները, կօժանդակի նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրով նախատեսված նպատակների իրագործմանը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Տեղեկատվական բազան համալրված է անհրաժեշտ տեղեկատվությամբ:	Երրորդ անձանցից ստացված տեղեկատվության 90% նույնացվում է, մշակվում և հաշվառվում:

**Ենթանպատակ 2.4.** Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի էլեկտրոնային տարբերակի արդիականացում, օրենսդրությանը համապատասխանեցում, թղթային տարբերակի հետ շեղումների բացառում

Ներկայումս որոշ դեպքերում, անձնական հաշվի քարտերի էլեկտրոնային և թղթային տարբերակները չեն համընկնում: Դրա պատճառներն են մասնավորապես օրենսդրության փոփոխությունները, որոնք չեն արտացոլվել համակարգչային ծրագրում և ծրագրերի մշակման նպատակով համապատասխան տեխնիկական առաջադրանքների բացակայությունը կամ դրանց ոչ լրիվությունը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Ներդրված է գործող օրենսդրությանը համապատասխանող էլեկտրոնային անձնական հաշվի քարտի վարման համակարգչային ծրագիրը:	Բացառվել են անձնական հաշվի քարտի թղթային և էլեկտրոնային տերբերակների միջև շեղումները:

**Ենթանպատակ 2.5.** SS ոլորտի հարկային ծառայողների մասնագիտական վերապատրաստում, աշխատավարձերի բարձրացում, արդյունավետ խրախուսման համակարգի ձևավորում

Ներկայումս SS ոլորտի հարկային ծառայողները հնարավորություն չունեն բարձրացնել իրենց գիտելիքների մակարդակը՝ մասնակցելով ծրագրային ապահովումներ մշակող կազմակերպությունների կողմից պարբերաբար անցկացվող ուսուցումներին, իսկ ոչ պետական կազմակերպություններում ծրագրավորողների բարձր աշխատավարձը հնարավորություն չի տալիս ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում ունենալ բարձր մակարդակի մասնագետներ:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
SS ոլորտի հարկային ծառայողների եկամուտների աճ և սոցիալական պաշտպանության բարձրացում	2009թ. SS ոլորտի հարկային ծառայողների աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների ավելացում 50%-ով:

### **ՆՊԱՏԱԿ 3. ՌԻՍԿԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՈՒ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՂՈՒՄ ՈՒ ԿԻՐԱՌՈՒՄ**

Գործող համակարգչային ծրագրում և տեղեկատվական բազայում լրիվ չեն արտացոլված հարկ վճարողների գործունեության ոլորտները, ինչը սահմանափակում է լիարժեք վերլուծություններ կատարելու և ռիսկային ոլորտները որոշելու և կառավարելու հնարավորությունները: Նախատեսվում է նաև մշակել և ներդնել ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության և ԱԱՀ գերավճարների դյուրացված վերադարձի համակարգչային ծրագրեր:

Ոչ պարտաճանաչ հարկ վճարողներին հայտնաբերելու և վերահսկելու խնդիրները լուծելու հետ մեկտեղ, նախատեսվում է որ համակարգը հնարավորություն կընձեռի հայտնաբերել կարգապահ և վստահելի հարկ վճարողներին:

Այս նպատակի ներքո իրականացվելու են հետևյալ ենթանպատակները

- 3.1. Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության (ՌՉԱՀ) համակարգի ստեղծում և ներդրում
- 3.2. ԱԱՀ գերավճարների դյուրացված վերադարձի համակարգի ստեղծում և ներդրում
- 3.3. Վերլուծությունների ավտոմատ համակարգի ստեղծում

#### **Ենթադրություններ.**

Առկա է հնարավորինս կայուն և հազվադեպ փոփոխվող օրենսդրական դաշտ

#### **Ռիսկեր.**

Համապատասխան մասնագետների բացակայություն

**Ենթանպատակ 3.1** Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության (ՌՉՍՀ) համակարգի ստեղծում և ներդրում

Այս ենթանպատակի ներքո նախատեսվում է ուսումնասիրել միջազգային փորձը, գործող օրենսդրությանը և ձևավորված պրակտիկային համապատասխան որոշել ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության չափանիշները և ստեղծել համապատասխան համակարգչային ծրագիր:

Արդյունքում ունենալու ենք ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգ: Այդ համակարգը կապահովի հարկային հսկողության թափանցիկությունը և կբարձրացնի հարկ վճարողների՝ կամավոր հարկերը վճարելու վարքագիծը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Ներդրված է ռիսկային ոլորտների և հարկ վճարողների գնահատման և կառավարման համակարգ	<p>- 2009թ ստուգման ենթակա հարկ վճարողների 60% ընտրությունը իրականացվում է համակարգչային ծրագրի միջոցով:</p> <p>2010թ.՝ 80 տոկոսից ավելին, 2011թ. ստուգվող բոլոր հարկ վճարողներն ընտրվելու են այս համակարգի միջոցով:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ անկախ հարցումների արդյունքներ, հարկային ծառայություն, տեղեկատվության այլ աղբյուրներ</i></p>

**Ենթանպատակ 3.2.** ԱԱՀ գերավճարների դյուրացված վերադարձի համակարգի ստեղծում և ներդրում

Այս ենթանպատակի ներքո նախատեսվում է ուսումնասիրել ռիսկերի գնահատման միջազգային փորձը, գործող օրենսդրությանը և ձևավորված պրակտիկային համապատասխան որոշել ԱԱՀ-ի գերավճարների դյուրացված վերադարձման չափանիշներն ու ռիսկերի գնահատման մեխանիզմները, ստեղծել համապատասխան համակարգչային ծրագիր:

Արդյունքում ունենալու ենք ռիսկային չափանիշների հիման վրա ԱԱՀ-ի գերավճարների դյուրացված վերադարձման համակարգ, որը կապահովի հարկային հսկողության թափանցիկությունը և կերաշխավորի կարգապահ կարկ վճարողներն ԱԱՀ-ի գումարների վերադարձման դյուրացված ընթացակարգ:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Ներդրված է ԱԱՀ-ի գումարների վերադարձի դյուրացված համակարգ:	<p>2009թ. ԱԱՀ-ի գումարների վերադարձի 30% ընտրությունը իրականացվում է ռիսկերի գնահատման ներդրված համակարգչային ծրագրի միջոցով:</p> <p>2010թ. վերջում՝ 70% ավելին:</p> <p><i>Տվյալների աղբյուրը՝ անկախ հարցումների արդյունքներ, հարկային ծառայություն, տեղեկատվության այլ աղբյուրներ</i></p>



**Ենթանպատակ 3.3.** Վերլուծությունների ավտոմատ համակարգի ստեղծում

Առկա տեղեկատվական բազաների համալրելը (տես՝ Նպատակ 2) հնարավորություն կընձեռի կատարելագործել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մասով կատարվող վերլուծական աշխատանքները: Դրա հետ միասին նախատեսվում է ստեղծել մատչելի անալիտիկ համակարգչային գործիքներ, որոնք կբարձրացնեն վերլուծական աշխատանքների արդյունավետությունը և կլայնացնեն դրանցից օգտվող աշխատակիցների շրջանակը:

Անալիտիկ համակարգչային գործիքներից օգտվելու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է անցկացնել համակարգի համապատասխան աշխատակիցների ուսուցում:

Նշված վերլուծական աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով կվարվի հարկային վիճակագրություն, որը կարևորվում է նաև հարկային համակարգի աշխատանքի թափանցիկության տեսակետներից:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>Ստեղծված է վերլուծությունների ավտոմատ համակարգ և վիճակագրական ձևերը: Վիճակագրական տվյալները պարբերաբար տպագրվում են մամուլում և տեղադրվում են ինտերնետ կայքում::</p>	<ul style="list-style-type: none"> <li>- 2009թ վերլուծական աշխատանքների 30% իրականացվում է համակարգչային ծրագրի միջոցով, 2010թ.՝ 50 տոկսից ավելին, 2011թ. 60 տոկսից ավելին:</li> <li>- 2009թ ընտրված է և վերահսկվում է 5-ից ավել ռիսկային ոլորտ, 2010թ՝ 10-ից ավել, 2011թ՝ 20-ից ավել:</li> <li>- հարկային վիճակագրության ձևերը բավարարում է օգտվողների առնվազն 60% -ին</li> </ul> <p><i>տվյալների աղբյուր՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցների հարցումներ</i></p>

**ՆՊԱՏԱԿ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ  
ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

Նպատակի ներքո նախատեսվում է ստեղծել համակարգչային ծրագրեր ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերը և դրա հետ կապված երրորդ անձանցից ստացվող տեղեկությունները, հարկ վճարողների հարկային հաշվարկները և այլ տեղեկությունները էլեկտրոնային եղանակով ընդունելու, դրանցում զետեղված տեղեկատվությունը տեղեկատվական բազա փոխանցելու մշակելու և հաշվառելու համար:

Այս նպատակի ներքո իրականացվելու են հետևյալ ենթանպատակները

4.1. Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի էլեկտրոնային տարբերակների փորձնական (“պիլոտային”) ընդունում:

4.2. Հարկային մարմիններ հաշվետվությունները և տեղեկությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգչային ծրագրի ստեղծում և ներդրում:

**Ենթադրություններ**

Առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ, մասնավորապես գործարկվում է հավատարմագրման կենտրոն:

**Ռիսկեր**

Համապատասխան տեխնիկական միջոցների բացակայություն:

**Ենթանպատակ 4.1.** Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով ընդունում:

Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի և դրա հետ կապված երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների ընդունման և մշակման խնդիրների հետ կապված է ֆիզիկական անձանց նույնացման խնդիրը, այդ իսկ պատճառով նախատեսվում է այդ հաշվետվական ձևը էլեկտրոնային եղանակով ընդունելու և մշակելու համար սկզբնական փուլով պատրաստել առանձին համակարգչային ծրագիր, որն իր մեջ ներառելու է նաև ֆիզիկական անձանց կողմից արժեթղթերի, շարժական և անշարժ գույքի հետ կապված գործարքների, ինչպես նաև ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկությունների ստացման, մշակման և հաշվառման աշխատանքների ավտոմատացման հարցերի կարգավորումը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Ստեղծվել է համակարգչային ծրագիր ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերը էլեկտրոնային տեսքով ընդունելու համար:	2008թ. հայտարարագրերի 10%-ից ավելին ընդունվել է էլեկտրոնային տարբերակով, իսկ հետագա տարիներին այն աճում է առնվազն 10 տոկոսային կետով:  Տվյալների աղբյուրը՝ հարկային ծառայություն

**Ենթանպատակ 4.2.** Հարկային մարմիններ հաշվետվությունները և տեղեկությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգչային ծրագրի ստեղծում և ներդրում:

Ներկայումս հարկային հաշվետվությունները ընդունվում են հարկային տեսչություններում կամ ուղարկվում են սովորական փոստով: Հաշվետվություններում զետեղված տեղակատվության մշակման արդյունավետությունը և ճշգրտությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է աստիճանաբար անցնել դրանց ընդունման ժամանակակից էլեկտրոնային տեխնոլոգիաներին՝ դյուրացնելով նաև հարկ վճարողների կողմից հարկային մարմինն ներկայացվող տեղեկությունների գործընթացը:

Նախատեսվում է, որ հարկ վճարողների հաշվարկների էլեկտրոնային տարբերակների ընդունումը լինելու է անվճար:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
<p>Հարկային մարմիններ հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով</p>	<p>2009թ. էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների տեսակարար կշռի ավելացում, մինչև 2011թ. հաշվետվությունների գերազանցապես (50%-ից ավելին) էլեկտրոնային տարբերակով ներկայացում:</p> <p>Տվյալների աղբյուրը՝ հարկային ծառայություն</p>

## **ՆՊԱՏԱԿ 5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

Այս նպատակը նախատեսում է էականորեն կրճատել, ինչպես ՀՀ ԿԱ ՊԵԿ ներսում, այնպես էլ արտաքին կառույցների հետ թղթային կրիչներով փոխանակվող տեղեկատվության ծավալը, բոլոր հնարավոր դեպքերում անցնելով էլեկտրոնային տարբերակով փոխանակմանը: Մասնավորապես, օրինակ գործող բանկային վճարային հանձնարարագրի ներկայիս ձևերը, անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով, բերում է մեծ ծավալի թղթային և ձեռքի աշխատանքների:

Նպատակին հասնելը որակապես նոր մակարդակի վրա կբարձրացնի ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում աշխատակիցների և ստորաբաժանումների, ինչպես նաև այլ պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվության փոխանակումը և հաղորդակցումը,:

Այս նպատակի ներքո “արտաքին աշխարհի” հետ հաղորդակցվելու համար նախատեսվում է լայնորեն օգտվել INTERNET-ի իսկ “ներքին” հաղորդակցվելու համար՝ INTRANET համակարգերի հնարավորություններից:

Այս նպատակի ներքո իրականացվելու են հետևյալ ենթանպատակները.

- 5.1 Թղթային կրիչներով տեղեկատվության փոխանակման կրճատում և հոսքերի օպտիմալացում
- 5.2 «Երրորդ անձանցից» ստացվող տեղեկությունների նույնացման և տեղեկատվական բազայում ներգրավվման գործընթացի ավտոմատացում
- 5.3 Պետական բյուջե վճարված գումարների վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային տարբերակով ստացում և հարկ վճարողների անձնական քարտերում ավտոմատ գրանցման ապահովում
- 5.4 Առևտրի կազմակերպման վայրերում ՀԴՄ-ների ցանցի ստեղծում և ֆիսկալ հասույթների վերաբերյալ տեղեկատվության ստացում և վերահսկում

### **Ենթադրություններ.**

- 1 Հաստատված են տեղեկությունների էլեկտրոնային տեսքով փոխանակման անհրաժեշտ ընթացակարգերը
- 2 ԿԲ-ի և Գանձապետարանի հետ համաձայնեցված և հաստատված է վճարային հանձնարարագրի նոր ձևը:
- 3 Առևտրի իրականացման վայրերում տեղադրված են ՀԴՄ-ներ

### **Ռիսկեր.**

Օրենսդրական դաշտի բացակայություն:

**Ենթանպատակ 5.1.** Թղթային կրիչներով տեղեկատվության փոխանակման կրճատում և հոսքերի օպտիմալացում

Առկա է մեծ ծավալի թղթային կրիչներով տեղեկատվության փոխանակումը: Որոշ դեպքերում այն կատարվում է ոչ օպտիմալ ճանապարհներով, ներգրավելով ՀՀ ԿԱ ՊԵԿ լրացուցիչ ստորաբաժանումներ: Նախատեսվում է գույքագրել տեղեկատվական հոսքերը, վերացնել կրկնությունները, օպտիմալացնել տեղեկատվության շրջանառությունը, ինչպես նաև կատարելագործել ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքը:

Ինտերնետի, ներկազմակերպական ինտրանետերի օգտագործման առկա միտումները և, ընդհանրապես, բրոուզերային տեխնոլոգիաների օգտագործման ընդլայնումն ու կատարելագործումը կնպաստի հարկային մարմնի ապագայում ավելի արդյունավետ կազմակերպություն լինելու հեռահար նպատակին:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Վերանայված են գործող կարգերը: Բոլոր հնարավոր դեպքերում տեղեկատվությունը տրամադրվում է էլեկտրոնային տեսքով: Թղթային կրիչների դեպքում տեղեկատվության վերաբերյալ հարցումը և պատասխանը կատարվում են հնարավոր կարճ շղթայով:	<ul style="list-style-type: none"> <li>- Շրջանառվող տեղեկատվության 80% ունի էլեկտրոնային տեսք:</li> <li>- Աշխատակիցների 90% բավարարված է իրենց անհրաժեշտ տեղեկատվության հասանելիության և այլ աշխատողների և ստորաբաժանումների հետ հաղորդակցության մակարդակով</li> </ul>

**Ենթանպատակ 5.2.** «Երրորդ անձանցից» ստացվող տեղեկությունների նույնականացման և տեղեկատվական բազայում ներգրավվման գործընթացի ավտոմատացում

Շատ դեպքերում 3-րդ անձանց տեղեկատվությունը ստացվում է թղթով և բացակայում է որևէ նույնացման ծածկագիր, ինչը դժվարացնում, կամ անհնարին է դարձնում ստացված տեղեկատվության մշակումը և կիրառումը:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Լուծված է «Երրորդ անձանցից» ստացվող տեղեկությունների նույնացման և տեղեկատվական բազայում ներգրավվման խնդիրը:	«Երրորդ անձանցից» ստացվող տեղեկատվության 90% միանշանակ նունացվում է և ներառվում է տեղեկատվական բազայում:

**Ենթանպատակ 5.3.** Պետական բյուջե վճարված գումարների վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային տարբերակով ստացում և հարկ վճարողների անձնական քարտերում ավտոմատ գրանցման ապահովում

Ներկայումս պետական բյուջե վճարված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը ՀՏ-ներում մուտքագրվում է ձեռքով: Նախատեսվում է Գանձապետարանի և ԿԲ-ի հետ համատեղ մշակել վճարման փաստաթղթի նոր ձև, որը հնարավորություն կտա հետագայում վճարման մասին տեղեկությունները ինտեգրել հարկային մարմնի տեղեկատվական բազա անմիջապես, գանձապետարանից ստացվող էլեկտրոնային տեղեկությունների միջոցով:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Ներդրված է պետական բյուջե վճարված գումարների վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային տարբերակով ստացման և հարկ վճարողների անձնական քարտերում ավտոմատ գրանցման համակարգը:	Գանձապետարանից տեղեկությունները ստացվում և տրամադրվում են ՀՏ-ներին էլեկտրոնային տեսքով՝ 90% ճշտությամբ, որոնք միաժամանակ ինտեգրվում են կենտրոնական տեղեկատվական բազա:



**Ենթանպատակ 5.4.** Առևտրի կազմակերպման վայրերում ՀԴՄ-ների ցանցի ստեղծում և ֆիսկալ հասույթների վերաբերյալ տեղեկատվության ստացում և վերահսկում

Ներկայումս առևտրի իրականացման վայրերը /տոնավաճառները/ հանդիսանում են դժվար վերահսկվող ոլորտներից մեկը: Այդտեղ ՀԴՄ-ների տեղադրումը և դրանց ցանցով միացումը անմիջապես կբարձրացնի հսկողության մակարդակը: Նախատեսվում է ստեղծել կազմակերպված առևտրի իրականացման վայրերում շահագործվող ՀԴՄ-երից ստացվող տեղեկությունների հարկային մարմինն հաղորդելու էլեկտրոնային համակարգ, ինչը կթեթևացնի ինչպես հարկային ծառայողների ՀԴՄ-երից ֆիսկալային հաշվետվություններ հանելու աշխատանքը, այնպես էլ կնվազեցնի հարկ վճարողի շփումը հարկային ծառայողի հետ:

Արդյունքը	Կատարողականության ցուցանիշները
Գործում են ՀԴՄ-ների ֆիսկալ հասույթների մասին տեղեկությունների հավաքագրման, փոխանցման և մշակման համապատասխան համակարգչային ծրագրեր և էլեկտրոնային ցանց:	- 2009թ Տոնավաճառների 90% ներդրված է համակարգչային ցանց

**ՄԱՍ II. ՏՏ ՈԼՈՐՏԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**Գործողությունների (միջոցառումների) ժամանակացույց  
«Նպատակ -1»-ի գծով**

**Նպատակը.** ՀՀ կառավարության կողմից մշակվող էլեկտրոնային կառավարման համակարգում ինտեգրում.

**Ենթանպատակները.**

1.1 ՀՀ պետական կառավարման մարմինների հետ տեղեկատվության փոխանակման գործընթացների ստանդարտացման նպատակով հարկային մարմնի տեղեկատվական բազաները կառուցել միասնական ծածկագրերի հիման վրա::

1.2 Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագրի համատեքստում անձնավորված հաշվառման համակարգի ներդրում

	<b>Միջոցառման անվանումը</b>	<b>Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը, ամսաթիվ, ամիս և տարեթիվ )</b>
1	Մասնակցել և օժանդակել Հայաստանի Հանրապետությունում ներդրվող էլեկտրոնային կառավարման համակարգի աշխատանքներին:	2011
2	Ստեղծել հարկ վճարողի և նրա կողմից իրականացվող գործունեության մասին տեղեկությունների ամբողջական էլեկտրոնային «թղթապանակ»	2009թ. սեպտեմբեր
3	Շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համատեղ հաստատել ֆիզիկական անձի նույնականացման համար անհրաժեշտ տեղեկությունները /անձնագրի համար, սերիա, սոց.քարտի համար կամ այլ տվյալ/ և ապահովել դրանց պարտադիր նշումը փոխանակվող տեղեկատվությունում:	2011թ.
4	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համաձայնեցնել քաղաքացիների սոց.քարտերի համարների տեղեկատվական բազայի տրամադրումը հարկային մարմնին և հետագայում պարբերական թարմացումը	2009թ. հուլիս
5	ՀՀ ոստիկանության հետ համաձայնեցնել քաղաքացիների անձնագրերի սերիա-համարների տեղեկատվական բազայի տրամադրումը հարկային մարմնին և հետագայում պարբերական թարմացումը	2009թ. օգոստոս
6	Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագրի համատեքստում անձնավորված հաշվառման համակարգի ներդրում	2010թ.

**Գործողությունների (միջոցառումների) ժամանակացույց  
«Նպատակ-2»-ի գծով**

**Նպատակը.** ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության մասով տեղեկատվական բազայի վերակառուցում, համալրում և ամբողջականացում

**Ենթանպատակները.**

2.1 Հարկային տեսչություններում և ՀՀ ԿԱ ՊԵԿ ստորաբաժանումներում ձևավորվող և վերադաս մարմնում հավաքագրվող բաշխված տեղեկատվական բազայից անցում վերադաս մարմնում ձևավորվող կենտրոնացված տեղեկատվական բազայի:

2.2 Էլեկտրոնային հարկային վարչարարության «Հարկատու 3» համակարգի ստեղծում:

2.3 Հարկ վճարողի միասնական տեղեկատվական դարանի ստեղծման և վերլուծության նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային տեղեկատվական բազայի համալրում անհրաժեշտ տեղեկություններով

2.4 Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի էլեկտրոնային տարբերակի արդիականացում, օրենսդրությանը համապատասխանեցում, թղթային տարբերակի հետ շեղումների բացառում

2.5 ՏՏ ոլորտի հարկային ծառայողների մասնագիտական վերապատրաստում, աշխատավարձերի բարձրացում, արդյունավետ խրախուսման համակարգի ձևավորում

	<b>Միջոցառման անվանումը</b>	<b>Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը, ամսաթիվ, ամիս և տարեթիվ )</b>
<b>7</b>	Ապահովել ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի և հարկային տեսչությունների միջև անխափան և ռեալ ժամանակում աշխատող էլեկտրոնային կապ:	2009թ. ապրիլ
<b>8</b>	Կատարել առկա տեղեկատվական բազաների կառուցվածքների և տվյալներ ճշտության աուդիտ:	2009թ. մարտ
<b>9</b>	Գույքագրել ՀՀ ԿԱ ՊԵԿ ստորաբաժանումներում վարվող տեղեկատվական բազաները:	2009թ. մարտ
<b>10</b>	Հարկային օրենսդրության վերաբերյալ հաճախ հանդիպող հարցերի համախմբման և օգտագործման տվյալների բազայի («գիտելիքների շտեմարանի») ծրագրի մշակում:	2009թ. նոյեմբեր
<b>11</b>	Վերացնել կրկնությունները: Կենտրոնական բազայում ներգրավել զուգահեռ վարվող բազաների տվյալները	2009թ. օգոստոս

12	Ուսումնասիրել ՊԵԿ համակարգի ստորաբաժանումների պահանջները անհրաժեշտ տեղեկատվության վերաբերյալ:	2009թ. մարտ
13	Հարկային վարչարարության միջազգային լավագույն /մասնավորապես Լատվիայի և Ավստրիայի/ փորձի ուսումնասիրություն:	2009թ. մարտ
14	Ներդնել հաշվետվություններ չներկայացրած և հարկերը չվճարած հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումներ տպագրելու ավտոմատացված համակարգ: Էլեկտրոնային տեսքով հաշվարկներ ներկայացնող հարկ վճարողների համար ապահովել հիշեցում-ցանուցումների ուղարկումը էլեկտրոնային փոստով :	2009թ. մարտ
15	Հարկ վճարողի միասնական տեղեկատվական դարանի ստեղծման նպատակով ՀՀ ՊԵԿ ստորաբաժանումներից հարցման միջոցով պարզել բացակայող, սակայն անհրաժեշտ տեղեկությունների ցանկը և լրացնել կենտրոնական բազան:	2009թ. ապրիլ
16	Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի էլեկտրոնային տարբերակի արդիականացման նպատակով հարկային տեսչություններից առաջարկությունների հավաքագրում, գույքագրում	2009թ. մարտ
17	Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի էլեկտրոնային տարբերակի համակարգչային ծարագրի տեխնիկական առաջադրանքի պատրաստմանն օժանդակում	2009թ. մարտ
18	Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի էլեկտրոնային տարբերակի համակարգչային ծարագրի կազմման կատարողի ընտրություն և պայմանագրի կնքում	2009թ. մարտ

**Գործողությունների (միջոցառումների) ժամանակացույց  
«Նպատակ-3»-ի գծով**

**Նպատակը.** Ռիսկային ոլորտների և հարկ վճարողների գնահատման և կառավարման համակարգի ներդրում և կիրառում

**Ենթանպատակները**

3.1. Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության (ՌՉՍՀ) համակարգի ստեղծում և ներդրում

3.2. ԱԱՀ գերավճարների դյուրացված վերադարձի համակարգի ստեղծում և ներդրում

3.3. Վերլուծությունների ավտոմատ համակարգի ստեղծում

	<b>Միջոցառման անվանումը</b>	<b>Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը, ամսաթիվ, ամիս և տարեթիվ )</b>
<b>19</b>	Միջազգային փորձի, այդ թվում պատրաստի համակարգերի ձեռք բերման և ՀՀ հարկային դաշտին համապատասխանեցման հնարավորությունների ուսումնասիրություն:	2009թ. մայիս
<b>20</b>	Ռիսկային չափանիշների որոշում:	2009թ. հունիս
<b>21</b>	Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի (ՌՉՍՀ) ստեղծում և ներդրում:	2009թ. սեպտեմբեր
<b>22</b>	ԱԱՀ վերադարձի դյուրացված համակարգի ստեղծում և ներդրում:	2010թ. ապրիլ
<b>23</b>	«Վստահելի հարկ վճարողի» ցանկերի ձևավորում	2009թ. մայիս
<b>24</b>	ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում տնտեսական գործունեության ոլորտների դասակարգչի ներդրում	2009թ. հունիս
<b>25</b>	Հարկային վերլուծական և վիճակագրական աշխատանքների միջազգային փորձի ուսումնասիրություն:	2009թ. հուլիս
<b>26</b>	Վերլուծական ճկուն ծրագրային գործիքների ներդրում, օգտվողների ուսուցում	2010թ. հունիս-օգոստոս
<b>27</b>	Օգտվողների և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցված հարկային վիճակագրական հաշվետվական ձևերի հաստատում	2009թ. հոկտեմբեր
<b>28</b>	Վիճակագրական ժողովածուների պարբերական կազմում և հրապարակում մամուլում և INTERNET կայքում	2009թ. հոկտեմբեր

**Գործողությունների (միջոցառումների) ժամանակացույց  
«Նպատակ-4»-ի գծով**

**Նպատակը.** Հաշվետվությունները հարկային մարմիններ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու համակարգի ներդրում և կատարելագործում

**Ենթանպատակները**

4.1. Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով ընդունում:

4.2. Հարկային մարմիններ հաշվետվությունները և տեղեկությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգչային ծրագրի ստեղծում և ներդրում:

	<b>Միջոցառման անվանումը</b>	<b>Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը, ամսաթիվ, ամիս և տարեթիվ )</b>
29	Էլեկտրոնային հաշվետվությունների, հայտարարագրերի և տեղեկությունների ընդունման և մշակման միջազգային փորձի ուսումնասիրություն:	2009թ. ապրիլ
30	Էլեկտրոնային հաշվետվությունների, հայտարարագրերի և տեղեկությունների ընդունման համակարգչային ծրագրի տեխնիկական առաջադրանքների պատրաստման օժանդակում:	2009թ. մարտ
31	Ֆիզ.անձանց գույքի և եկամուտների էլեկտրոնային հայտարարագրերի ընդունման համակարգչային ծրագրի պատրաստում	2009թ. մարտ
32	Ֆիզ.անձանց գույքի և եկամուտների էլեկտրոնային հայտարարագրերի ընդունման ծրագրի փորձարկում և սխալների ուղղում	2009թ. ապրիլ
33	Ֆիզ.անձանց գույքի և եկամուտների էլեկտրոնային հայտարարագրերի ընդունման ծրագրի ներդրում:	2009թ. մայիս
34	Հարկային մարմիններ հաշվետվությունները և տեղեկությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգչային ծրագրի պատրաստում	2009թ. ապրիլ
35	Հարկային մարմիններ հաշվետվությունները և տեղեկությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգչային ծրագրի փորձարկում, սխալների ուղղում	2009թ. մայիս
36	Հարկային մարմիններ հաշվետվությունները և տեղեկությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգչային ծրագրի ներդրում:	2009թ. հունիս
37	Հարկային տեսչություններում համակարգչային տերմինալների տեղադրում	2009թ. հուլիս
38	Հաշվետվությունների տվյալները հարկ վճարողի անձնական հաշվի քարտում ինտեգրելու համակարգչային ծրագրի մշակում	2009թ. օգոստոս

**Գործողությունների (միջոցառումների) ժամանակացույց  
«Նպատակ-5»-ի գծով**

**Նպատակը.** Տեղեկատվական հոսքերի կառավարման կատարելագործում

**Ենթանպատակները**

- 5.1 Թղթային կրիչներով տեղեկատվության փոխանակման կրճատում և հոսքերի օպտիմալացում
- 5.2 «Երրորդ անձանցից» ստացվող տեղեկությունների նույնականացման և տեղեկատվական բազայում ներգրավման գործընթացի ավտոմատացում
- 5.3 Պետական բյուջե վճարված գումարների վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային տարբերակով ստացում և հարկ վճարողների անձնական քարտերում ավտոմատ գրանցման ապահովում
- 5.4 Առևտրի կազմակերպման վայրերում ՀԴՄ-ների ցանցի ստեղծում և ֆիսկալ հասույթների վերաբերյալ տեղեկատվության ստացում և վերահսկում

	<b>Միջոցառման անվանումը</b>	<b>Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը, ամսաթիվ, ամիս և տարեթիվ )</b>
<b>39</b>	Գույքագրել ՊԵԿ ստորաբաժանումների միջև տեղեկատվական հոսքերը: Էլեկտրոնային և թղթով փոխանակվող տեղեկությունների դեպքում վերացնել կրկնությունները:	2009թ. մարտ
<b>40</b>	Օպտիմալացնել թղթաշրջանառությունը:	2009թ. մարտ
<b>41</b>	INTERNET կայքում սկսել տեղադրել վարչական իրավախախտումների և ստուգման ակտերի մասին և համապատասխան այլ տեղեկատվությունը՝ հաստատված ընթացակարգերին համապատասխան	2009թ. ապրիլ
<b>42</b>	ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվություն տրամադրող մարմինների հետ կարգավորել հարկ վճարողին նույնականացման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման հարցը:	2009թ. հունիս
<b>43</b>	Ստեղծել 3-րդ անձանց կողմից ստացվող տեղեկատվության մշակման համակարգչային ծրագիր	2009թ. օգոստոս
<b>44</b>	Տվյալների մշակման տարածքային կենտրոնների ստեղծման նպատակով համապատասխան ծրագրի մշակում	2009թ. դեկտեմբեր
<b>45</b>	ՀՀ ՖՆ գանձապետարանից ստացվող տեղեկատվության հարկային մարմնի տեղեկատվական բազայում ինտեգրվելու համակարգչային ծրագրի տեխնիկական առաջադրանքի պատրաստում	2009թ. ապրիլ
<b>46</b>	ՀՀ ՖՆ գանձապետարանի և կենտրոնական բանկի հետ համատեղ վճարային փաստաթղթերի նոր ձևի մշակում և հաստատում	2009թ. հունիս
<b>47</b>	Պետ. բյուջե վճարված գումարների տեղեկատվության մշակման և	2009թ.

	ինտեգրման համակարգչային ծրագրի մշակում:	հոկտեմբեր
48	ՀՀ ՖՆ գանձապետարանից ստացվող տեղեկատվության հարկային մարմնի տեղեկատվական բազայում ինտեգրվելու ծրագրի ներդրում	2010
49	ՀԴՄ-նիբի ցանցի ստեղծման նպատակով կապալառու կազմակերպության ընտրություն և պայմանագրի կնքում	2009թ. մարտ
50	ՀԴՄ-ներից ստացված տվյալների մշակման և հաշվետվական ձևերի կազմման համակարգչային ծրագրի տեխնիկական առաջադրանքի պատրաստմանն օժանդակում	2009թ. մարտ
51	ՀԴՄ-ներից ստացված տվյալների մշակման Համակարգչային ծրագրերի մշակում և ներդրում:	2009թ. մայիս



## ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն ռազմավարությունը համահունչ լինելով ներկայումս իրականացվող հարկային համակարգի բարեփոխումներին հնարավորություն է տալիս սահմանելու հարկային մարմնի SS ոլորտի զարգացման ուղղությունները: SS ոլորտում իրականացվող բարեփոխումները չեն սահմանափակվում միայն հարկային մարմնով, դրանք համահունչ են նաև ՀՀ կառավարության կողմից SS բնագավառում իրականացվող ծրագրերին, մասնավորապես, խոսքը վերաբերում է, ՀՀ-ում մշակվող էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագրերին:

Հարկային մարմնի SS ոլորտի ռազմավարությունը սահմանվել է համապատասխան նպատակների տեսքով, որոնք տրոհվել են մի շարք ենթանպատակների: Նախատեսված ենթանպատակների ամբողջական կատարումն ապահովելու նպատակով յուրաքանչյուր ենթանպատակի համար սահմանվել են արդյունքներ և կատարադականության ցուցանիշներ, որոնք հնարավորություն կտան գնահատելու ոչ միայն տվյալ ենթանպատակի կատարումը, այլ նաև դրա արդյունավետությունը: Ռազմավարությունն ամբողջական է դարձել շնորհիվ SS ոլորտի ռազմավարության միջոցառումների իրականացման ժամանակացույցի, որտեղ ներկայացված են այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները՝ ըստ հստակ սահմանված կատարման ժամկետների:

Ենթադրվում է, որ SS ոլորտի ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացումից հետո կընդլայնվի հարկային մարմնում SS կարողությունների կիրառումը և հարկային մարմնում առկա կլինեն հարկային վարչարարությանը օժանդակող SS գործիքներ, ինչը հնարավորություն կտա բարձրացնելու հարկային վարչարարության արդյունավետությունը: